Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2(075)
Ч-35

374

2(075)
Ч-23

2018

571
10715

Ofr. gr. Fach. Hymnologie

280
825-ԻՄ

ՆԱԽՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

Ի ՊԷՏՍ ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ԴԱՍՄՈՒՑ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅԻՆ

Գրքնեալ 7/II-1922
Առաջարկութեամբ եւ Հպատեռացմամբ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ.

Տպագրեալ Հրամանաւ

Տ. ՆԵՐՍԻՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Ф.Л. ЛАЗАРЯНА ГРИГОРИЯ
Публичная Библиотека
г. Ереван, Мясникяна

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1877

107804-ԱՀ

2(075)
Ե-23 ԱՀ
2012

ԸՆԹԱՑԻ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա.

ՆԱԽՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Գործոյս Երկրորդ տպագրութեան իրաւունքը Մ. Ճ. Արամեանի կպատկանի։ ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Դ.

ՍՐԲԱԶՆԱԳԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՑ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Տ. ՆԵՐՍԻՍԻ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Յազմագեղեալ Եօգուլու, Յակոբեան խաչ. Թիւ 13.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ուղիղ Դաստիարակութեան հիմը՝ կրօնն է։ Եթէ Դաստիարակութիւնը պէտք է ի մանկութենէ ընդունուի, առաւել եւս հարկ է որ կրօնքի սկզբունքները՝ յառաջ քան զամենայն մանկութեան մատաղ սրտերուն մէջ տպաւորուին, որպէսզի մտաց եւ սրտի կրթութիւնը հաստատուն հիման վերայ խարսխուի։

Սակայն տղայոց մտաւոր անդաստանին մէջ Հաւատոյ սուրբ սկզբունքները արդիւնաւոր կերպիւ սերմանելոյ համար, պարտ եւ արժան է ի նկատի ունենալ նոցա դեռաբողբոջ կարողութիւնքը, ու ըստ այնմ ջանալ որ դիւրըմբռնելի, կամ դէթ զոնէ դիւրուսանելի կերպիւ աւանդուին մեր երկնաւոր Կրօնին այն վեհ ճշմարտութիւնները, որ նոցա ճիշմ սրտերը՝ պիտի զօրացուցեն, դիւրաթեք միտքերը՝ ուղղեն, եւ դեռաբոյս հոգիները՝ բարձրացուցեն ազնիւ զգացմանց վերասլաց խոյանքներով։

Տղայոց համար ամուլ ուսում մի է Քրիստոնէականը՝ երբ հոն չուսանին զոր ինչ կարեւորն է, կամ չուսանին այնպէս ինչպէս որ կարեւորն է:

Պարզ, ամիսոի եւ դիւրուսանելի ոճը (մեթոդը) Քրիստոնէականի ուսումը ոչ միայն կդիւրացուցնէ տղայոց, այլ մանաւանդ թէ՝ նոցա սրտին եւ մտքին մէջ անջնջելի կապաւորէ Հաւատոյ այն փրկարար սկզբունքները՝ զորս յետոյ ժամանակը, ընդարձակագոյն ուսողութիւնը, եւ մանաւանդ՝ Ս. Գրոց ընթերցումն եւ սրոճումը՝ պիտի բարգաւաճեն եւ պտղաբերեն:

Այս խորհրդածութեամբք՝ Ազգային կեդրոնական Վարչութեան Կրօնական ժողովն խնդրեց ի մէնջ գրել մի ՆԱԽՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ, որ իւր յստակութեամբը, ամիսութեամբը եւ ոճոյն ընթացքովը՝ դիւրուսանելի լինի Նախակրթարանի աշակերտացը, բայց իւր համառօտութեանը մէջ՝ պարունակէ զկարեւորագոյն սկզբունս Հաւատոյ եւ Բարոյականի:

Սոյն առաջարկութեան արդիւնքն է ներկայս, զոր Սրբազումար ժողովն եւ նորուն Ամենապատիւ Սրբազան Նախագահ հաճեցան վաւերացընել, եւ որոշեցին որ ելանէ ի լոյս, եւ աւանդուի լուսումն մանկուցն, ի Վարժարանս Ազգիս:

Առաջիկայ Քրիստոնէականը պատշաճ համարեցանք երեք մասի բաժանել:

Ա. ՀԱՒԱՏՍԱԼԻՔ. յորում կաւանդուին այն Կրօնական Ճշմարտութիւնք՝ որոց պարտիմք հաւատալ, որպէսզի ժառանգեմք զիրկութիւն.

Բ. ՊԱՐՏԻՔ. յորում կաւանդուին այն աստուածային Պատուիրանները՝ զորս պարտիմք կատարել, որպէսզի հասանիմք յերջանկութիւն.

Գ. ՍԻՐՈՅՑՔ. յորում կաւանդուին Շնորհաց այն աղբիւրները՝ զորս ետ մեզ Աստուած, որպէսզի լուսաւորուիմք, զօրանամք եւ սրբանամք:

Սոյն բանաւոր ոճով յօրինեցինք նաեւ մի ԿՐԹԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ, բայց հարկաւ ճոխագոյն եւ ապացուցական. որովհետեւ ոչ եթէ իբրեւ զներկայս դեռակիրթ մանկանց համար սահմանուած է այն, այլ ըստ բաւականի զարգացեալ պատանեաց, որոց միտքը՝ կոկսի հետաքննել կարգացածին եւ ուսածին ապացոյցները, ըստ խրատն Նորազարթ կարողութեան:

Ուստի ՆԱԽՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԻՆ երկրորդ հատորը պէտք է համարուի ԿՐԹԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆը, յոր պարտ է անցանել աշակերտն՝ երբ ի մանկութենէ ի պատանեկութիւն անդր թեւակոխէ, եւ բարձրանայ ի վերին դասարան:

Սպաքէն բարեբաղդ պիտի համարիմք զանձինս՝ եթէ օրհնէ Աստուած մեր այս դուզնաքեայ գործերը, որպէսզի Հայ անմեղ մանկանց նորաբողբոջ սրտերուն մէջ՝ Հաւատոյ եւ Բարուց սուրբ սկզբունքները տպաւորելոյ յարմար եւ արժանի գործի լինին սոքա ի ձեռս Հոգւոյն Սրբոյ, որ աղբիւրն է իմաստութեան եւ հանճարոյ։

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ ՊԷՏ

Ի Պէշիքթաշ Կոստանդնուպոլսոյ

20 Յունվար 1877.

Առ Դերապատիւ տէր

Տ. ԽՈՐԷՆ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ ՊԷՏ

Դերապատիւ Սրբազան Եղբայր,

Զաշխատասիրեալն առ ի Ձէնջ ընթերցեալ զՆԱԽՆԱԿԱՆ և զԿՐԹԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԱՂ, որպէս և զընդարձակդ ԴԱՍԱԿԱՆ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, աւելորդ վարկանիմ ներբողս յերիւրել աստանօր. քանզի բացայայտ իսկ է Ոչ երեքին ևս արժանի ծնուդ են երկանց քաջուսումն Հեղինակին, և տպագրութիւն նոցա՝ օգտակար յոյժ ի փառս Հայաստան Եկեղեցեաց, և յուսումն ուխտի մանկանց Վարժարանաց Ազգիս։

Մնամ Դերապատիւ և Սրբազան

Եղբայրութեանդ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի Պատրիարքարանի Հայոց

5 փետր. 1877

Աղօթակից

Պ. Կ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ

Ըստ առաջարկութեան Ամենապատիւ Պատրիարքի Կ. Պոլսոյ, Տեառն Ներսիսի Սրբազան Արքեպիսկոպոսի Վարժապետեան, քննեալ զայս ՆԱԽՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ՝ զօրինեալն ի Գերապատիւ Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՆԱՐ ՊԷՑ, առաջարկութեամբ և հաստատութեամբ նախորդ Կրօնական Ժողովոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան 1875-1876 ամաց, զտաք ամենեքիմբ համաձայն վարդապետութեան եւ աւանդից Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ :

Վասն որոյ և առաջարկեմբ տպագրութեամբ ի լոյս տալ զսա, իբրև օգտակար յոյժ յուսումն մանկանց տղայոց Վարժարանաց Ազգիս :

Ի Կ. Պոլիս. 14 հոկ. 1876

ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ
Քարոզիչ Ս. Կարապետ Եկեղեցւոյ
Նոր—Քաղի Յիսկիւտար

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿ. ԱՇԸՔԵԱՆ
Հայր Վանացն Արմաշու

ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ՌՈՒԲԻՆԵԱՆ
Քարոզիչ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն
Գալաթիոյ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ
Քարոզիչ Ս. Խաչ Եկեղեցւոյ
Սելամիէի Յիսկիւտար

ՊՕՂՈՍ Վ. ԹՕԼՏԱՄԵԱՆՑ
Քարոզիչ Ս. Աստուածածին Եկեղ. ի Խասգիւղ

Տ. ՍԱՀԱԿ ՔՀ. Տ. ՍԱՐԳՍԵԱՆ
Ս. Աստուածածին Եկեղ. ի Միջագիւղ

Տ. ՅՈՎՀ. ՔԱՀԱՆԱՑ ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԼԷՆՏԵԱՆ

ՅՈՎՀ. ՊՐ. Տ. Կ. ՏԷՐՈՅԷՆՑ

«Ես Աստուծոյ կեցից, եւ ընդ Քրիստոսի ի խաչ ելից»։
(ԳԱՂԱՏ. Բ. 19.)

ՄԱՍՆ Ա.

ՀԱՒԱՏԱԼԻՔ

ԴԱՍ Ա.

ՎԱԽՃԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԻՆ

1. Ով ստեղծեց զքեզ.
— Աստուած։

2. Ինչու՞ ստեղծեց.
— Զինքը ճանաչելոյ, սիրելոյ, պաշտելոյ և երջանիկ լինելոյ համար։

3. Աստ ի՞նչ երջանկութիւն կուտայ զինքը ճանաչողին, սիրողին ու Իրեն ծառայողին.

— Անոր մեռնելէն վերջը յաւիտենական կեանք կպարգևէ։

4. Յաւիտենական կենաց արժանի լինելոյ համար ինչ պարտիմք ընել.

— Պարտիմք ապրիլ ու մեռանիլ իբրև ճշմարիտ Քրիստոնեայ։

5. Ովքէ ճշմարիտ Քրիստոնեայ.

— Այն որ միրտուած է, կհաւատայ ու կդաւանի Քրիստոնէական վարդապետութիւնը։

6. Ի՞նչ է Քրիստոնէական վարդապետութիւնը.

— Քրիստոսի Փրկչին մերոյ սովրեցուցած կրօնն ու Վարդապետութիւնն է։

ԴԱՍ Բ.

ՆՇԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԻՆ

1. Դու ճշմարիտ Քրիստոնեայ ես.

— Այո, ճշմարիտ և ուղղափառ Քրիստոնեայ եմ ես, շնորհօքն Աստուծոյ։

2. Ինչպէ՞ կըսես «շնորհօքն Աստուծոյ»։

— Վասնզի Այդ ամենէն մեծ պարգևն է որ ինձ շնորհեց, զիս Քրիստոնեայ և ուղղափառ ծնողաց զաւակ ծնուցանելով։

3. Ի՞նչ նշանով կյայտնես թէ Քրիստոնեայ ես.

— Խաչակնքելով զիս, կամ Խաչին նշանն ընելով կդաւանիմ թէ Քրիստոնեայ եմ։

4. Խաչակնքելոյ ատենդ ի՞նչ կըսես.

—«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։»

5. Ի՞նչպէս կխաչակնքես.

— Աջ ձեռքիս երեք մատը ճակատիս կը տանիմ, ու կըսեմ «Յանուն Հօր». յետոյ դէպ ի սիրտս կտանիմ, ու կըսեմ «և Որդւոյ». յետոյ ձախ [illegible] թևիս կողմը կտանիմ [illegible] «Սրբոյ. ամէն»։

Հ.Ս.Խ.Հ. Հանրային Գրադարան
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Գ. Ալեքսանդրապոլ, Մասնիկեան
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

6. Խաչակնքելով [illegible] ինչպէս կայտնես թէ Քրիստոնեայ լինիս։

— Վասնզի այս նշանս [illegible] կխոստովանիմ ու կդաւանիմ Քրիստոնէութեան երեք մեծագոյն խորհուրդները։

7. Որո՞նք են այն երեք գլխաւոր խորհուրդքն Քրիստոնէութեան.

—Ա. Խորհուրդ Սուրբ Երրորդութեան.
Բ. Խորհուրդ Մարգարէութեան Քրիստոսի.
Գ. Խորհուրդ Փրկագործութեան։

ԴԱՍ Գ.

ՈՒՍԱՆԵԼԻՔ ՔՐԻՍՏՈՆԵԻՆ

1. Քրիստոնեայ լինելոյն առաջին հարկաւոր պայմանն ո՞րն է.
— Ճանաչել այն ճշմարտութիւնները զոր Աստուած յայտնած է Եկեղեցւոյ։
2. Միայն ճանաչելը բաւական է.
— Ոչ, այլ և հաւատալ անոնց ի բոլոր սրտէ, որպէսզի կարենամք փրկուիլ։
3. Աստուծոյ յայտնած ճշմարտութեանց գլխաւորներն ո՞ր ամփոփուած են.
— Հաւատամքին մէջ, որ կը սուի նաև Հանգանակ Հաւատոյ։
4. Ուրեմն հաւատամքը հարկ է որ գիտնայ Քրիստոնեային.

— Այո՛, անպատճառ, վասնզի անով միայն կրնայ մտքին ու սրտին մէջ տպաւորել հաւատոյ գլխաւոր ճշմարտութիւնները, որ ամենահարկաւորք են ի փրկութի մեր։
5. Հաւատամքը քանի՞ գլխաւոր յօդուած ունի.
— Տասներկու գլխաւոր յօդուած, ու մէկ մ՚ալ յաւելուած։
6. Ո՞վ շինած է Հաւատամքը.
— Ըստ վարդապետութեան Առաքելոց՝ Նիկիոյ և Կոստանդնուպոլսոյ սուրբ ժողովները կարգաւորեցին զայն որ անփոփոխ և անայլայլելի մնայ։
7. Հաւատամքը ո՞վ աւանդած է մեր Եկեղեցւոյ.
— Սուրբ Հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչ, ինչ ինչ բացատրութեամբք։

ԴԱՍ Դ.

ՀԱՆԴԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

1. Հանդանակի առաջին յօդուածն ըսէ.

— Ա. «Հաւատամք է զի Աստուած, է Հայրն ամենակալ, յարութիւն երկնի և երկրի, երևելեաց և անտեսանելեաց»։

2. Երկրորդ յօդուածն ըսէ.

— Բ. «Եւ է զի Տէր Յիսուս Քրիստոս, յԱստուծոյ, Աստուած, ծնեալն յԱստուծոյ Հօրէ զոծին, այսինքն էութենէ Հօր։ Աստուած՝ յԱստուծոյ, լոյս՝ է լուսոյ Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն է քնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և է վերայ երկրի, երևելիք և անտեսանելիք»։

3. Ո՞րն է երրորդ յօդուածը.

— Գ. «Որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան էջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կուսէն Մարիամայ Սրբոյ Կուսէն, Հոգւոյն Սրբով։ Որով եառ մարմին, հոգի և միտ, և զամենայն՝ որ է ինչ է մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք»։

4. Ո՞րն է չորրորդ յօդուածը.

— Դ. «Զարկարեալ, խաչեալ, թաղեալ»։

5. Ո՞րն է հինգերորդ յօդուածը.

— Ե. «Յերրորդ աւուր յարութեալ»։

6. Ո՞րն է վեցերորդ յօդուածը.

— Զ. Ելեալ է յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր»։

7. Ո՞րն է եօթներորդ յօդուածը.

— Է. «Գալոց է նովին մարմնովն և փառաւ Հօր, է դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ է վախճան»։

8. Ո՞րն է ութերորդ յօդուածը.

— Ը. «Հաւատամք և է Սուրբ Հոգին, յանէն և է կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս և է Մարգարէս և յԱւետարանս։ Որ եկն է Յորդանան, փարեալոց զԱստուածն և քնակեցաւ է Սուրբն»։

9. Ո՞րն է իններորդ յօդուածը.

— Դ. «Որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան էջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալն է Մարիամայ Սրբոյ Կուսէն, Հոգւոյն Սրբով։ Որով եառ մարմին, հոգի և միտ, և զամենայն՝ որ է ինչ է մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք»։

4. Ո՞րն է չորրորդ յօդուածը.

— Դ. «Զարկարեալ, խաչեալ, թաղեալ»։

5. Ո՞րն է հինգերորդ յօդուածը.

— Ե. «Յերրորդ աւուր յարութեալ»։

6. Ո՞րն է վեցերորդ յօդուածը.

— Զ. Ելեալ է յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր»։

7. Ո՞րն է եօթներորդ յօդուածը.

— Է. «Գալոց է նովին մարմնովն և փառաւ Հօր, է դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ է վախճան»։

8. Ո՞րն է ութերորդ յօդուածը.

— Ը. «Հաւատամք և է Սուրբ Հոգին, յանէն և է կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս և է Մարգարէս և յԱւետարանս։ Որ եկն է Յորդանան, փարեալոց զԱստուածն և քնակեցաւ է Սուրբն»։

9. Ո՞րն է իններորդ յօդուածը.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. *Ուսուցիչը՝ այս դասը երկուքի կամ երեքի կրնայ բաժանել, ըստ կարողութեան աշակերտաց, որպէսզի կարենան անսխալ սովրիլ Հաւատոյ Հանդանակը, և անշփոթ արտասանել զայն ամբողջ ծայրէ ի ծայր։ Մինչև որ կատարեալապէս չսերտեն՝ պէտք չէ անցանել ի յետագայն Դասն։*

— Ա. «Հաստատեալ է մի դեղն, ընդհանրական և առաքելական եկեղեցի»:

10. Ո՞րն է առաքելական յօդուածը.

— Ժ. «Ի մի տկրտութիւն, յապաշխարութիւն, է թաւութիւն և է նորոգութիւն մեղաց»:

11. Ո՞րն է մեռելոց յարութեանը յօդուածը.

— ԺԱ. «Ի յարութիւն մեռելոց»:

12. Ո՞րն է երկնաւորաց յարութեանը յօդուածը.

— ԺԲ. «Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից, և է կեանն յաւիտենական»:

13. Ո՞րն է յաւելուածը.

— «Իսկ որ ասեն «էր երբեմն յորժամ ոչ էր Որդի», կամ «էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին», կամ թէ «յոչէից եղեն», կամ «յայլոց եղանեալ» ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զՍուրբ Հոգին, և թէ՝ «փոփոխելի են», կամ «այլայլելի», զայնպիսիսն՝ ընդվզ կանողիցէ և Առաքելական Սուրբ Եկեղեցի»:

14. Սուրբ Հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչ Հանգանակին ինչ կնիք դրաւ:

— Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրն մեր այս համառօտ և գեղեցիկ դաւանութեամբ կնքեց զՀանգանակն հաւատոյ:

«Իսկ զի փոխարինոցուք որ յարաջ քան զԱյրէոպեանս, երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեան և զոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և զեղջ և յաւիտեան յաւիտենից. ամեն:»

ԴԱՍ Ե.

ԱՌԱՋԻՆ ՅՕԴՈՒԱԾ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ.

ԱՍՏՈՒԱԾ

1. Աստուած ինչ է.

— Աստուած է ամենապարգ, ամենակատարեալ, անհուն և յաւիտենական Ոգի, ստարիչ երկնի և երկրի:

2. Աստուած մարմին ունի՞.

— Աստուած մարմին ունի, ոչ կերպարանք:

3. Կրնա՞մք Աստուծոյ խելք հասցունել.

— Ոչ. վասնզի Աստուած անչափ և յաւիտենական լինելով, մեր տկար մտքովը չեմք կրնար ըմբռնել Նորա անհուն էութիւնն ու խելք հասցունել, ամենիմաստ գործոցը:

4. Աստուած ո՞ր է.

— Աստուած ամեն տեղ է, երկնքի մէջ, երկրիս վերայ և յամենայնի։

5. Աստուած ամեն բան կը տեսանէ՞

— Աստուած ոչ միայն ներկայն կտեսանէ, ու մեր սրտին խորհուրդը կգիտէ, այլ և անցեալն ալ՝ գալիքն ալ կտեսանէ ու գիտէ։

6. Ինչէն գիտենք թէ Աստուած կայ՝

— Վասնզի ինքն յայտնած է, ու անկարելի է որ գոնէ խաբէ։

7. Ինչու Աստուած զմեզ չկրնար խաբել.

— Վասնզի ինքն է ճշմարտութիւնն յաւիտենական։

8. Տիեզերայս կարգաւորութենէն ինչ կհետևցունենք.

— Աշխարհի սքանչելի կարգաւորութենէն ալ կրնանք հետևցունել թէ այս ամենը Ստեղծող մի կայ։

ԴԱՍ Զ.

ԵՐԵՐԱԳՈՒԹԻՒՆ

—

1. Աստուած քանի՞ է.

— Աստուած մի միայն է. մեկէն աւելի Աստուած չկայ և չկրնար լինել։

2. Ինչո՞ւ ուրեմն խաչակնքած ատենդ կըսես Հայր, Որդի և Հոգին Սուրբ.

— Վասնզի Աստուած երեք անձնե՛ ունի, որ են Հայր, Որդի և Հոգին Սուրբ, և երեքն ալ մի Աստուած են։

3. Ուրեմն երե՞ք Աստուած կայ.

— Ոչ երբէք. Հայր, Որդի եւ Հոգին Սուրբ զո՛ զո՛ անձնաւորութիւն ունին, բայց դ և նոյն անքննելի աստուածութիւնն ունին։

4. Երեք անձանց մէջ ո՞րն է մեծը կամ աւելի զօրաւորը.

— Մեծ կամ զօրաւորագոյն չկայ. երեքն ալ հաւասար են ամեն բանով։

5. Այս բանին կրնամք խելք հասցուցնել.

— Ո՛չ. առ տկարութեան մտաց մերոց՝ չեմք կրնար կատարեալ խելք հասցուցնել։

6. Ուրեմն ինչէ՞ն գիտեմք.

— Այս ճշմարտութիւնը գիտեմք, վասն զի ինքն իսկ Աստուած յայտնած է զայն։

7. Երեքանձնեայ Աստուածութեան Խորհուրդը ի՞նչ կկոչուի.

— Խորհուրդ Սուրբ Երրորդութեան։

8. Ի՞նչ ըսել է Խորհուրդ.

— Աստուածային գաղտնիք մի որ մեր մտքէն շատ բարձր լինելոյն համար՝ չեմք կարող ըմբռնելու թէեւ կիմանամք թէ մտքի դէմ չէ, այլ մեր խելքէն վեր է։

9. Միայն աստուածայի՞ն Խորհրդոց չեմք կրնար խելք հասցուցնել.

— Ոչ, այլ նոյն իսկ մեր աչքով տեսածներս մեծ մասին խելաբերնիս չհասնիր։

ԴԱՍ Է.

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

—

1. Ո՞վ է աշխարհիս Ստեղծողը.

— Աստուած, արարիչն երկնի և երկրի, և գերագոյն Տէրն ամեն բանի։

2. Ի՞նչպէս ստեղծեց Աստուած.

— Միայն իւր ուզելովը հրամայեց և ստեղծուեցան։

3. Ո՞ւրկէ ստեղծ Աստ զբոլոր տիեզերս.

— Ոչնչէ. վասնզի Աստ ստեղծելէն առաջ բան մի չկար. Աստ ստեղծած է ամեն բան։

4. Ո՞րչափ ժամանակի մէջ ստեղծեց Աստ.

— Կրնար մէկ ակնթարթի (այսինքն աչք բանալ դոցելոյ) չափ ատենի մէջ ստեղծել, բայց ուզեց ծանր ծանր գործել։

5. Քանի՞ օրուան մէջ ստեղծեց Աստուած զերկին և զերկիր.

— Վեց օրուան մէջ ստեղծեց մեր այս տեսած ու չտեսած բաներդ։

6. Աստուծոյ արարածոց մէջ ամենէն կատարեալներն որո՞նք են.

— Հոգւով՝ Հրեշտակք և Մարդիկ։

ԴԱՍ Բ.

ՀՐԵՇՏԱԿՔ

1. Հրեշտակք ի՞նչ են.

— Ոգեղէն պարզ գոյացութիւնք, որ մարմին չունին։

Ո՞րչափ հրեշտակներ կան.

— Անթիւ և անհամար բազմութիւն են։

3. Հրեշտակները ո՞ւր են.

— Երկնքի մէջ, Աստուծոյ քով։

4. Հրեշտակները ի՞նչ կընեն.

— Աստուծոյ կծառայեն, զնա կփառաբանեն, և յաւիտեան երջանիկ պիտի լինին։

5. Հրեշտակները մարդուս ի՞նչ կընեն.

— Աստուծոյ հրամանաւ զմարդս ալ կը-պաշտպանեն, իբրև զոհապան։

6. Հրեշտակապետներն որո՞նք են.

— Գաբրիէլ և Միքայէլ մեծ հրեշտակք։

7. Հրեշտակք ի՞նչ բանի մեզ օրինակ են.

— Կատարեալ սիրոյ և հնազանդութեան առ Աստուած։

8. Դեւք կամ չար հրեշտակք ի՞նչ են.

— Այն հրեշտակներն են՝ որ Աստուծոյ հաւատարիմ չմնացին, երկինքէն դժոխք ինկան, ու կկոչուին դեւ, սատանայ։

ԴԱՍ Թ.

ՄԱՐԴԻՆ

1. Ի՞նչպէս ստեղծեց Աստ զառաջին մարդ.

— Աստուած հողէն ստեղծեց առաջին մարդը, որ Ադամ կկոչուէր։ Նա է մեր ամենուս ալ հայրը։

2. Առաջին կինն ի՞նչպէս ստեղծեց.

— Ադամայ կողէն ստեղծեց Աստուած

առաջին կինը, որ կկոչուէր Եւա։ Նա է ամենուս ալ մայրը։

3. Ադամ ու Եւան ի՞նչ վիճակի մէջ ստեղծեց Աստուած.

— Մեր նախածնողքը Աստուած ստեղծեց սուրբ, անմեղ և երջանիկ վիճակի մէջ։

4. Մնայի՞ն այն երջանկութեան մէջ.

— Այո՛ անհնազանդ դտնուելով կորուսին զանմեղութի՛ւն և դրախտէն արտաքսուեցան։

5. Ադամայ մեղքը իրենց զաւակաց վերայ ալ անցա՞ւ.

— Այո՛, մեր վերայ ալ անցաւ, անոր համար է որ ամենքս ալ մեղաւոր կծնանիմք, ու մեղք գործելոյ յօժարութիւն մի հետերնիս կբերեմք, և տեսակ տեսակ ցաւերու և մահուան ենթակայ եմք։

6. Ծնած առեննիս հետերնիս բերած մեղքն ի՞նչ կըսուի.

— Ադամայի՛ն կամ սկզբնական մեղք։

7. Ինչո՞վ կազատիմք ադամայի՛ն մեղքէն.

— Մկրտութեամբ սուրբ Աւազանին։

ԴԱՍ Ժ.

ԵՐԿՐՈՐԴ ՅՈԳՈՒԱԾ, ՀԱՆԴԱՆԱԿԻՆ.

ՓՐԿԻՉՆ

1. Սկզբնական մեղօք ինչ բանի արժանի էր մարդս.

— Սկզբնական մեղօք արժանի եղաւ յաւիտենական մահու և դատապարտութեան։

2. Ա՞ծ ինչպէս անկէ ազատեց զմարդս.

— Փրկիչ մի խոստացաւ, որ զմարդս ազատէ ու Աստուծոյ հետ հաշտեցունէ։

3. Ո՞վ է այն Փրկիչը.

— Այն Փրկիչն է Աստուծոյ Միածին Որդին մարդացեալ, ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ։

4. Ի՞նչ ըսել է մարդացեալ.

— Ըսել է թէ Որդին Աստուած մեզի պէս մարդ եղաւ, մեր մարդկային բնութիւնն առաւ՝ կատարեալ կերպով։

5. Մեր մեղքն ալ առաւ.

— Ոչ. վասնզի Ինքն Ա՞ծ է, դերագոյն արքութիւն, ուստի չկրնար մեղք գործել։

6. Որդին Ա՞ծ մարդկային բնութիւն առնելով Աստուածութիւնը թողո՞ւց.

— Ոչ, այլ աստուածային բնութեանն հետ միացոյց նաև մարդկային բնութիւնը։

ԴԱՍ ԺԱ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

1. Ուսկի՞ց ծնաւ Որդին Աստուծոյ.

— Ի Մարիամայ Կուսէն, Հոգւո՞վն Սրբով։

2. Որդին Աստուծոյ և Որդի Կուսին Մարիամու տարբե՞ր են իրարմէ.

— Ոչ. այլ Որդին Ա՞ծ՝ եղաւ և Որդի Կուսին Մարիամու, և է Ցե՞ռ Տէրն մեր։

3. Ուրեմն Ցե՞ Քե՞ կատարեալ Աստուած և կատարեալ մարդ է.

— Այո՛, Ցե՞ Քե՞ Տէրն մեր կատարեալ Աստուած է, և կատարեալ մարդ։

4. — Ինչո՞ւ կը սեպես Տէրն մեր.

— Վասնզի Յիսուս Քրիստոս իբրև Աստ՝ Տէր է ամէն բանի, և իբրև Փրկիչ՝ զմեզ ստացաւ իւր պատուական արիւնովը։

5. Ինչո՞ւ զմեզ փրկեց.

— Որպէս զի լինիմք իրեն յատուկ որդիքն և ժողովուրդ, և ժառանգք յաւիտենական երջանկութեան, յերկինս։

6. Ինչո՞վ կը լինիմք ժառանգք յաւիտենական երջանկութեան.

— Վերատին ծննդեամբ սրբոյ Աւազանին, հաւատալով յամենասուրբ Երրորդութիւնն, Աստուծոյ օրէնքները պահելով, և զբարին գործելով։

7. Ճշմարիտ հաւատք ու բարի գործեր չունեցողը կը փրկուի.

— Ոչ. այնպիսին կը զրկուի յաւիտենական երջանկութենէն։

ԴԱՍ ԺԲ.

ԵՐՐՈՐԴ ՑՕԴՈՒԱԾ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ.

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ

1. Ի՞նչպէս ծնաւ Յիսուս Քրիստոս.

— Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը, մսրի մի մէջ ծնաւ Քրիստոս Տէրն մեր։

2. Ո՞վ եղան առաջին երկրպագուք Քեի.

— Առաջին երկրպագուք Քեի եղան հովիւքն Բեթլեհէմի. յետոյ իշխան մոգեր, որ արևելքէն եկան երկրպագել Քեի։

3. Ի՞նչպիսի կեանք վարեց Քրիստոս.

— Երեսուն տարի աղքատ վիճակի մէջ, ծնողացը հնազանդ, ու աշխատանօք։

4. Ե՞րբ ինքզինք սկսաւ յայտնել Քրիստոս.

— Երեսուն տարեկան լինելէն վերջը եկաւ մկրտուիլ ի Յովհաննէս Մկրտչէ։

5. Հայր Աստուած ի՞նչ վկայեց այն օր.

— Քրիստի մկրտուելոյ ժամանակ Հայրն

Աստուած վկայեց յերկնից թէ Նա իւր սիրելի Միածին Որդին է։

6. Ի՞նչպէս եղոյց Քրիստոս թէ Աստուծոյ Որդին է և Փրկիչ աշխարհի.

— Չորս կերպով. Առաջին՝ իւր կենաց աստուածային սրբութեամբը։

7. Երկրորդ.

— Իւր վարդապետութեան գերմարդկային բարձրութեամբը։

8. Ուրիշ ինչով.

— Իւր ըրած մարգարէութեամբքը։

9. Չորրորդ.

— Իւր գործած մեծամեծ հրաշքներովը։

10. Քրիստոս իւր քարոզութիւը ի՞նչ կանուանէր.

— Աւետարան. — այսինքն մարդկութեան աւետիք, բարի լուր։

11. Քրիստոս որո՞ց յանձնեց որ Աւետարանը քարոզեն ու տարածեն.

— Տասներկու առաքելոց, որ ձկնորս ու անուս մարդիկ էին, բայց Աստուծոյ շնորհօք՝ աշխարհի ամենէն իմաստուն մարդիկներէն բարձր բաներ խօսեցան ու գրեցին։

ԴԱՍ ԺԳ.

ՉՈՐՐՈՐԴ, ՀԻՆԳԵՐՈՐԴ, ՎԵՑԵՐՈՐԴ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ԾՈՂՈՒԱԾՔ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ.

ԽՈՐՀՈՒՐԴ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

1. Ի՞նչ կերպով փրկեց զմեզ Քրիստոս.

— Մեզ համար չարչարուելով, ու խաչին վերայ մեռանելով, աւագ ուրբաթ կէս օրը։

2. Ինչու՞ չարչարուեցաւ ու մեռաւ Քրիստոս.

— Մեր մեղայ թողութիւն ու զԱստուած մեզ հետ հաշտեցուներլոյ համար։

3. Քրիստոս Տէրն մեր մեռեալ մնաց.



— Ոչ, այլ ինչպէս գուշակած էին մարգարէք և ինքն իսկ, յարեաւ ի մեռելոց։

4. Ի՞նչպէս յարեաւ Քրիստոս.

— Մարմինք գերեզման գրուելուն երրորդ օրն (այսինքն կիրակի կամ միաշաբաթ) առաուն յարեաւ ածային զօրութեամբը։

5. Յարութիւնն առնելէ ետքը ի՞նչ գործեց.

— Երևեցաւ իւր աշակերտաց, քառասուն օր զանոնք հրահանգեց և համբարձաւ։

6. Ո՞ւր համբարձաւ Քրիստոս.

— Երկինք, Հօր Աջ քով, ուրկից պիտի

դայ նորէն յաշխարհ, դատաստանին օրը։

7. Աշակերտացը զմի առաքեց Քրիստոս.

— Զհոգին Սուրբ, որ Պենտեկոստէի, կամ Հոգեգալստեան օրը եկաւ Առաքելոց վերայ ի՞նչ։

8. Ի՞նչ ըրաւ Հոգին Սուրբ.

— Առաքեալները մխիթարեց, լուսաւորեց մտքերնին, ու լցոյց զնորհօք և ճշմարտութեամբ, որ Աւետարանը իրմով քարոզեն աշխարհի։

9. Ո՞վ է Հոգին Սուրբ.

— Ամենասուրբ Երրորդութեան երրորդ Անձն է, ճշմարիտ Աստուած։

10. Ինչո՞ւ Հաւատամքին մէջ անեղ և կատարեալ կկոչուի Հոգին Սուրբ.

— Վասնզի անսկիզբն է, արարած չէ, այլ իբրև զՀայրն Աստուած և զՈրդին Աստուծոյ կատարեալ Աստուած է։

ԴԱՍ ԺԴ.

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾՔ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ.

ԵԿԵՂԵՑԻ

1. Զի՞նչ է Եկեղեցի.

— Եկեղեցին է ժողով կամ ընկերութիւն ուղղափառ Քրիստոնէից, որ թէպէտ բոլոր աշխարհի վերայ տիրուած են, այլ մէկ Եկեղեցի, մէկ մարմին կկազմեն։

2. Ինչո՞վ.

— Իրենց հաւատով, դաւանութեամբ, սուրբ Խորհրդոց հաղորդութեամբը, և հնազանդութեամբ իրենց օրինաւոր հովուաց, այսինքն Եպիսկոպոսաց։

3. Աշխարհիս վերայ ամեն Քրիստոնեայ ընկերութիւն ճշմարիտ Եկեղեցի՞ են.

— Ոչ, այլ կան նաև Եկեղեցիէ դուրս հերձուածող և հերետիկոս Քրիստոնեայ ընկերութիւններ։

4. Ճշմարիտ Եկեղեցին ունի՞ նշաններ որով կարենամք ճանաչել.

— Ճշմարիտ Եկեղեցին ունի Հաւատամքին մէջ յիշուած չորս նշաններն, որով

կճանաչուի մոլորեալ եկեղեցիներէն։

5. Որո՞նք են այդ նշանները.

— Ճշմարիտ եկեղեցին է 1) Մէ. 2) Սուրբ. 3) Ընդհանրական (կամ Կաթողիկէ). և 4) Առաքելական։

6. Մեր ուղղափառ եկեղեցւոյն վերայ այս չորս նշանները կտեսնուին.

— Այո՛, այս չորս նշանք կտեսնուին Հայոց Ս. եկեղեցւոյն վերայ, զոր հիմնած են Թադէոս և Բարթողիմէոս Առաքեալք։

7. Հաւատամքին մէջ ի՞նչ կնշանակէ լսելն «Ի Ս. Հոգւոյն, յապաշխարութեան, ի թողութիւն և ի նորութիւն Ոգւոյ».

— Կնշանակէ թէ Քրիստոս իւր եկեղեցւոյն իշխանութի՛ տուաւ արձակել զամենայն մեղս։

8. Ի՞նչ միջոցներով Ս. եկեղեցին կարձակէ զմեղս.

— Դիւրաւորապէս սուրբ խորհրդովքն Մկրտութեան և Ապաշխարութեան։

ԴԱՍ ԺԵ.

ՈՒԹԵՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾՔ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ.

ՍՈՒՐԲ ԳԻՐՔ ԵՒ ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆ

1. Եկեղեցին ի՞նչ կսովրեցունէ.

— Եկեղեցին հաւատացելոց կուսուցանէ այն ճշմարտութիւնները զոր Քրիստոս սովրեցոյց և յայտնեց Առաքելոց։

2. Այն ճշմարտութիւնք ո՞ւր կգտնուին.

— Աստուածաշնչի և Աւանդութեան մէջ։

3. Աստուածաշունչն ի՞նչ է.

— Աստուածաշունչը կամ Ս. Գիրքը՝ Այ Իսկն է, զոր հաղորդեց Մարգարէից և Առաքելոց, և նոքա գրեցին Հոգւովն Սրբով։

4. Ի՞նչ ըսել է Հոգւով Սրբով.

— Ասել է թէ Հոգին Սուրբ առաջնորդեց Մարգարէից և Առաքելոց՝ որ ուղիղ և անսխալ գրեն իւր ներշնչութիւնները։

5. Աստուածաշունչը քանի՞ մասն ունի.

6. Երկու. Ս. Հին Կտակարան, որ քան առաջ գրուած է Մարգարէից ձեռքով։

7. Երկրորդ մասը ի՞նչ կկոչուի.

— Նոր կտակարան, որ Քրիստոսի Առաքելոց ձեռքով գրուեցաւ։

8. Աւանդութիւնն ի՞նչ է.

— Աւանդութիւն՝ Աստուծոյն է, զոր Առաքեալք բերնով սովրեցուցին իրենց աշակերտաց, և նոքա ևս իրենց յաջորդաց, յորոց հասաւ առ մեզ անփոփոխ և անայլայլելի։

ԴԱՍ ԺԶ.

Է. ԺԱ. ԵՒ ԺԲ. ՅՕԳՈՒԱԾՔ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ.

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ

1. Հաւատամքին Է. ԺԱ. և ԺԲ. յօդուածները ի՞նչ կպարունակեն.

— Հանդերձեալ կեանքը, և Քրիստոսի երկրորդ գալուստն յաշխարհ ի դատաստան։

2. Հանդերձեալ կեանքն ի՞նչ է.

— Այն յաւիտենական, այսինքն անմահ կեանքը՝ որ կսկսի զկնի մահուան։

3. Ի՞նչ է մահը.

— Բաժանումն հոգւոյն ի մարմնոյ։

4. Մահուանէ ետքը հոգին ի՞նչ կլինի.

— Առաքինի մարդոյ հոգին՝ կերթայ հանգչիլ յօթևանս արդարոց, յԱրքայութեան։ Իսկ չար մարդոյ հոգին կերթայ տանջուիլ դժոխքին մէջ։

5. Ննջեցելոց վայելքն ու տանջանք այժմէն կատարեա՞լ պիտի լինին.

— Ոչ, այլ անկատար կերպով պիտի

վայելեն ու տանջուին, վասնզի միայն հոգի են, մարմին չունին։

6. Ե՞րբ պիտի սկսի կատարեալ վայելքն ու տանջանքը.

— Յաւիտենից դատաստանին օրը։

7. Ի՞նչպէս պիտի լինի դատաստանն յաւիտենից.

— Մեր մարմինները յարութիւն պիտի

առնուն, նորէն միանան հոգւոց հետ, ու երկուսն ի միասին պիտի դատուին ի Քրիստոսէ, իրենց բարի և կամ չար գործոցն համեմատ։

8. Արդարք ի՞նչ վարձք պիտի ընդունին.

— Յաւիտենական կեանք հոգւով և մարմնով, «Արքայութեանն Աստուծոյ»։

9. Չարերը ի՞նչ վարձք պիտի ընդունին.

— Յաւիտենական տանջանք և թշուառութիւն հոգւով և մարմնով՝ դժոխքի մէջ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՐՏԻՔ

ԴԱՍ Ա.

ՕՐԷՆՔ ՔՐԻՍՏՈՆԵԻՆ

—

1. Աստուծոյ հաճոյ լինելոյ և յաւիտենական կեանք ստանալոյ համար բաւական է Հանգանակին մէջի պարունակեալ ճշմարտութեանց հաւատալը.

— Ոչ, այլ պարտիմք կատարել նաև զՊարտիս՝ զորս Ս. Կրօնը մեր վերայ կդնէ։

2. Որո՞նք են այն Պարտիքը.

— Կրօնին մեր վերայ դրած Պարտիքը գլխաւորաբար երեք են. Ա. Օրէնքները պահել. Բ. Մեղքէ զգուշանալ. Գ. Առաքինութիւն գործել։

3. Քանի՞ տեսակ են Օրէնք.

— Երկու. Ա. Բնական Օրէնք. Բ. Դրական Օրէնք, կամ Տաճնաբանեայ պատուիրանք։

4. Բնական Օրէնքը ո՞րն է.

— Բնական Օրէնք կկոչուին այն սկզբունքները որ ամեն մարդոյ սրտին մէջ դրոշմուած են, ու խիղճը կցուցանէ մեզ թէ պէ՞տք է գործել կամ չգործել։

5. Բնական Օրինաց բովանդակութիւնն ի՞նչ է.

— Ա. Ընել ուրիշին ինչ որ կուզեմք որ մեզի ընեն.

Բ. Չընել ուրիշին ինչ որ չեմք ուզեր որ մեզի ընեն։

ԴԱՍ Բ.

ՏԱՃՆԱՐԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

1. Ի՞նչ է Դրական Օրէնքը, կամ Տաճնաբանեայ պատուիրանքը.

— Աստուծոյ յայտնած Օրէնքն է, զոր Մովսէս Մարգարէին ձեռքով գրել տուաւ, և Քրիստոս Ցէրն մեր յետոյ հաստատեց։

2. Որո՞նք են այդ տասն պատուիրանք։

— 1. Ես եմ Տէր Աստուած քո. դ՝ երկիր քեզ աստուածք՝ քոց յինէն։

2. Մի՛ արասցես քեզ կուռս քոք ամենայն նմանութեան. դ՝ երկիրպագանիցես նոցա, և դ՝ պաշտեսցես։

3. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ ունայնոց։

4. Յիշեսջի՛ր զօրն շաբաթու սրբել զնա։

5. Պատուեա՛ զհայր քո և զմայր քո, զի բարի լինիցի քեզ, և երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրի։

6. Մի՛ սպանանիր։

7. Մի՛ շնար։

8. Մի՛ գողանար։

9. Մի՛ ասասցես վկայեր դնիցիս քոմիջ։

10. Մի՛ ցանկանար տան ընկերի քո, և այլն և դ՝ ամենայնի զինչ ընկերին քո իցէ։

3. Տաճնաբանեայ պատուիրանաց համառօտութիւնն ի՞նչ է.

— Սիրել զԱստուած ամեն բանէ վեր, ու մեր ընկերն՝ սիրել իբրև մեր անձը։

4. Արմենարէն ըսէ՝ զՏաճնաբանեայն.

1. Ես եմ Տէր քո, դ՝ ունիցիս այլ աստուածք.

2. Մի՛ զինիր կուռք, և դ՝ պաշտիր ըստ ինքեանս.

3. Տէրոջ անուն մի՛ առնուր ըստ ի բերան.
4. Յիշեա՛ զօրբեալ զօր շաբաթուն հանդիսաւորեան.
5. Պատուեա՛ զծնողսդ որ շատ ապրիս պարքինեալ.
6. Մի՛ սպանանիր, ոչ զանձն և ոչ զընկեր.
7. Մի՛ շնար դու, 'ի՞նչ իսկ յայրուս հայեցուածդ.
8. Մի՛ գողանար քանզի զայլոց ընդունուածդ
9. Ճշմարտին դէմ երբէք մի՛ սուտ վկայեր.
10. Մի՛ ցանկանար ինչ որ ունի դրդ ընկեր։

ԴԱՍ Գ.

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ

1. Առաջին պատուիրանով Աստուած ի՞նչ կհրամայէ.

— Կհրամայէ 1) Հաւատալ զԱստուած. 2) Յուսալ ի նա. 3) Սիրել զնա բոլոր սրտով. 4) զնա միայն պաշտել։

2. Այս չորս պարտաւորութիւնքն ինչպէս կրնամք կատարել.

— Գործադրելով երեք ածանուէր առաքինութիւններն, որ են Հաւատք, Յոյս, և Սէր։

3. Ինչու այս առաքինութիւնք աստուածանուէր կկոչուին.

— Վասնզի Հաւատք, Յոյս և Սէր ուղղակի Աստ կվերաբերին, և Աստ կնուիրուին։

4. Ի՞նչ է Հաւատքը.

— Հաւատքը դերբնական առաքինութիւն մի է որով որոշ մասօք կընդունիմք այն ամէն ճշմարտութիւնները՝ զորս Աստ յայտնած է ու կսովրեցունէ մեզ Ս. Եկեղեցւոյ ձեռքով։

5. Ե՞րբ հաւատնիս կարդարացունէ զմեզ.

— Երբոր հաւատոյն հետ բարի գործեր ալ կատարեմք։

6. Ի՞նչ է Յոյսը.

— Յոյսը դերբնական առաքինութիւն մի է, որով մեր վստահութիւն Աստ վերայ դնելով՝ կսպասեմք որ այս աշխարհիս մէջ տայ մեզ Իւր շնորհքը, իսկ անդիի աշխարհին մէջ՝ յաւիտենական կեանք և փառք։

7. Ի՞նչ է Սէրը.

— Սէրը դերբնական առաքինութիւն մի է, որով զԱստուած կսիրեմք ամէն բանէ վեր, և Իւր սիրոյն համար՝ մեր ընկերն ալ կսիրեմք մեր անձին պէս։

8. Ի՞նչ է պաշտել զԱստուած.

— Պաշտել զԱստուած՝ է պատուել զնա երկրպագութեամբ, իբրև Տէր մեր և Արարիչ։

ԴԱՍ Դ.

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ

1. Երկրորդ պատուիրանով Աստուած ի՞նչ կհրամայէ.

— Կուռք չշինել, ու նոյն իսկ Աստուծոյ արձանն չշինել։

2. Քրիստոսի Տեառն մերոյ պատկերը շինելու ալ կարգելու այս պատուիրանով.

— Ոչ. վանդի Քեի պատկերը կներկայացունէ մեզ զմարդկային կերպարանս Փրկչին մերոյ, մարդացելոյ վասն մեր։

3. Սրբոյ պատկերներն ու նշխարներն կամ մասունքներն ալ կրնամք յարգել.

— Այո. վանդի նոքա Այ սիրելիքն են, և մարմինք նոցա՝ տաճարք են Ս. Հոգւոյն, ինչպէս Պօղոս Առաքեալ կուսուցանէ։ Ուստի ինչ յարգական պատիւ որ նոցա ընծայեմք՝ Աստուծոյ կվերաբերի։

4. Կրնամք Սուրբերը մեզ բարեխօս բռնել առ Աստուած.

— Այո, վանդի Այ աթոռոյն ստքը նոցա մատուցած աղօթքը շատ ընդունելի է Այ,

որոյ ողորմութիւնը կհայցեն վասն մեր։

5. Երրորդ պատուիրանով Աստուած ի՞նչ կհրամայէ.

— Հինգ բան. 1) Սուտ երդում չընել. 2) Պարապ տեղ երդում չընել. 3) Չհայհոյել. 4) Զանիծել, չեղծել. 5) Դրած ուխտերնիս հաւատարմութեամբ կատարել։

6. Երրորդ պատուիրանին դէմ ո՞վ կը մեղանչէ.

— Ով որ բերանը վարժեցուցեր է երդում կընէ, ու Աստուծոյ անունը պարապ տեղ բերան կառնու, այնպիսին ծանր մեղք կգործէ։

7. Ուրիշ ո՞վ կմեղանչէ երրորդ պատուիրանին դէմ.

— Ով որ բերանը դէշ խօսքեր կառնու, հայհոյութիւն, յիշոց (էֆ-ֆէ-ր) կընէ։

8. Ով որ իր ուխտը չպահէ՝ կմեղանչէ.

— Այո, ծանր մեղք կգործէ ով որ Աստուծոյ խօսք կուտայ ու չկատարեր։

9. Ինչո՞ւ.

— Վանդի այնու ուզած կլինի խաբել զամենագէտն Աստուած։

ԴԱՍ Ե.

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

1. «Յիշե՛ զբեթել զօր շաբաթուն» ըսելով Աստուած ի՞նչ կհրամայէ.

— Աստուծոյ նուիրուած օրը, այսինքն Կիրակին՝ սուրբ պահել։

2. Ինչո՞ւ Կիրակի օրը Այ նուիրուած է.

— Վասնզի այն օրը Քրիստոսի առաւարով Առաքեալք շաբաթի օրուան տեղ հրամայեցին որ Կիրակի օրը սուրբ պահեմք։

3. Կիրակին ի՞նչպէս սուրբ կպահուի.

— Երեք կերպով. 1) Շահադիտական գործեր չընելով. 2) Կրօնական գործեր կատարելով. 3) Հոգեշահ գործոց զբաղելով։

4. Շահադիտական գործերն որո՞նք են.

— Մարմնաւոր շահու համար եղած աշխատութիւններն, զորօրինակ՝ արհեստ բանեցուցանել, խանութ բանալ, են։

5. Կրօնական գործերն որո՞նք են.

— Աղօթել, ժամերգութեան երթալ,

քարոզ լսել, ու մանաւանդ՝ Սուրբ Պատարագին ներկայ գտնուիլ եկեղեցւոյ մէջ։

6. Ամեն Կիրակի այս պարտքն ունի՞մք.

— Այո՛, ամեն Քրիստոնեայ պարտական է անպատճառ Կիրակի օրերը եկեղեցի երթալ, ու Սուրբ Պատարագի ներկայ գտնուիլ հաւատով և ջերմեռանդութեամբ։

7. Ով որ Կիրակի օրը Սուրբ Պատարագի ներկայ չգտնուի, կմեղանչէ.

— Ով որ ծանր հիւանդ չէ, ու ծուլութեամբ եկեղեցի չերթար, Սուրբ Պատարագին ներկայ չգտնուիր՝ մեծ մեղք կգործէ, ու Աստուծոյ շնորհէն նա կհեռացունէ ինքզինքը։

8. Հոգեշահ գործերն ի՞նչ են.

— Սուրբ Գիրքը, մանաւանդ Ս. Աւետարան կարդալ, հոգևոր գրքեր ընթեռնուլ, բարի գործոց պարապիլ, բարոյական կըրթութեան զբաղիլ, խրատել, քարոզել, են.

ԴԱՍ Զ.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

—

1. «Պատուեա՛ զհայր քո և զմայր» ըսելով ի՞նչ կհրամայէ Աստուած.

—Կհրամայէ 1) Սիրել մեր հայրն ու մայրը. 2) Պատուել զանոնք. 3) Հնազանդիլ նոցա. 4) Օգնել նոցա մեր ձեռքէն եկածին չափ։

2. Ինչո՞ւ պարտիմք սիրել մեր ծնողքը.

— Վասնզի Աստուծմէ ետքը նոքա արարին մեզ կեանք, ու մեր սիրոյն համար ամեն նեղութիւն քաշած են ու. կքաշին։

3. Ինչո՞ւ պարտիմք պատուել մեր ծնողքն, ու նոցա հնազանդիլ։

— Վասնզի մեզի համար Այ փոխանորդեն աշխարհիս վերայ, ուստի պարտիմք նոցա ամեն մեծարանք և հնազանդութիւն։

4. Ո՞վ եղաւ օրինակ որդիական հնազանդութեան.

— Քրիստոս Տէրն մեր, որ իւր ծնողացը կատարեալ հնազանդ եղաւ, որպէսզի և որդիք սովրին թէ պարտին կատարեալ

հնազանդութիւն իրենց հօրն ու մօրը։

5. Ինչո՞ւ պարտիմք օգնել մեր ծնողաց.

— Վասնզի արդարութիւնը կպահանջէ որ ինչպէս մեր ծնողք զմեզ խնամեցին մեր աղայութեանը ժամանակ, նոյնպէս և մեք զիրենք խնամեմք, ու օգնեմք իրենց

հիւանդութեան, ծերութեան ու կարօտութեանը ժամանակ։

6. Ի՞նչ փոխարէն կխոստանայ Աստուած ծնողասէր զաւակաց.

— Ամեն տեսակ բարիք կխոստանայ Աստ թէ այս աշխարհիս մէջ, և թէ անդին։

7. Ո՞ր աղայքը Քրիստոս օրհնեց.

— Այն տղայքը՝ որք որդիականչհնազանդութեամբ սիրելի էին իրենց ծնողաց, և նոցա ձեռքով ընծայուեցան ի դիրկս Քրիստոսի։

8. Ծնողատեաց զաւակը ինչ կլինի.

— Թէ՛ ծնողաց երեսէն կլինայ և թէ Աստուծոյ երեսէն։ Անպիսին կընդունի անէծք, և մարդոց առջև ալ իրաւամբ անպատիւ կլինի, իբրև չար ու խորթ որդի։

9. Ո՞վ է օրինակ չար զաւակաց.

— Անառակ որդին որ հօրը դէմ ապըստամբելով պատժուեցաւ, խեղճութեան

մէջ անկաւ, մնաց, մինչև որ զղջացաւ։

10. Հոգևոր ծնողաց ինչ պարտք ունիմք.

— Մի և նոյն պարտքերն՝ ինչ որ առ մարմնաւոր ծնողս ունիմք։

11. Ծառայք ինչ պարտիք ունին.

— Ծառայք պարտին 1) Մեծարել իրենց տէրերը. 2) Հնազանդիլ նոցա. 3) Սրտանց, հաւատարմութեամբ ու առանց գողութեան ծառայել, Աստուծոյ սիրոյն համար։

ԴԱՍ Է.

Զ. Է. Ը. Թ. ԵՒ Ժ. ՊԱՏՈՒԷՐԱՆՔ

1. «Մէ՛ սպանանիր» լսելով ինչ կհրամայէ Աստուած.

— Կհրամայէ որ 1) Ինքզինքիս չսպանանեմք. 2) Մեր ընկերը չսպանանեմք. 3) Սպանութեան խորհուրդը մտքերնէս անդամ չանցուներմք. 4) Զվիրաւորեմք զոք, չծեծեմք, չզարնեմք անիրաւ տեղ։

2. Ուրիշ կերպով մեռուցանելն ալ կարգելու Աստուած.

— Այո՛, այս պատուիրանով կարգելու մեզ Աստուած որ մեր եղբայրը բարոյապէս չսպանանենք, զրպարտելով, անունը կոտրելով ու զինքն սատելով։

3. Ո՞վ եղաւ առաջին մարդասպանը.

— Կային, ադամայ անդրանիկ որդին, որ իւր Աբէլ անմեղ եղբայրն սպանանելով, անիծուեցաւ։

4. «Մէ՛ ՀՈՐ» ըսելով ի՞նչ կհրամայէ Աստ.

— Կհրամայէ որ զգուշանամք ամեն չար, անբարոյական ու անպատիւ գործերէ և մտածութիւններէ։

5. «Մէ՛ ԳՈՂԱՆՈՐ» ըսելով ի՞նչ կհրամայէ Աստուած.

— Կհրամայէ որ ուրիշին պզտիկ բանն անդամ չգողանամք, չվերցընենք ու չպահենք։

6. Գողութիւնը խոստովանելով կբաւի.

— Ոչ. պէտք է նախ գողցած բաներնիս տիրոջը դարձուցանենք կամ փոխարինենք, որ արձակման ճշմարտապէս արժանանամք։

7. «Մէ՛ ՍՈՒՏ ՎԿԱՅԵՔ» ըսելով ի՞նչ կհրամայէ Աստուած.

— Կհրամայէ որ ուրիշին վերայ սուտ

վկայութիւն չդնենք, չզրպարտենք, չբամբասենք, ու բնաւ սուտ չխօսիմք, ոչ մեր շահուն համար՝ և ոչ ուրիշին ինչաս հասցունելու համար։

8. «Մէ՛ ՅԱՆԿՆՈՐ» ըսելով ի՞նչ կհրամայէ.

— Կհրամայէ որ ուրիշին ունեցածին ոչ աչք դնենք, ոչ յափշտակենք, և ոչ փափաքիմք ձեռք անցունելու. վասնզի մեծ անիրաւութիւն և ծանր մեղք է։

ԴԱՍ Ը.

ՆՈՐ ՕՐԷՆՔ. — ՄԵՂՔ

1. Նոր Օրէնքը, կամ Քրիստոնէական Օրէնքը ո՞րն է.

— Նոր Օրէնքը՝ Քրիստոսի պատուիրաններն են, զոր Աստուաբելոց առաքելական Եկեղեցին մեզ կասվրեցունէ։

2. Ի՞նչ կսլատուիրէ մեզ Նոր Օրէնքը.

— Երկու մեծ պատուէրներ կուտայ որ մեր կենաց ուղղութեանը կվերաբերին։

3. Որո՞նք են.

— Զգուշանալ ի մեղաց, և գործել զառաքինութիւն, — կամ, Ատել զչարն, և առնել զբարին։

4. Ի՞նչ է մեղքը։

— Մեղքը՝ Աստուծոյ օրինաց դէմ գործուած անհնազանդութիւնն է։

5. Մեղքը քանի՞ տեսակ է։

— Մեղքը երկու տեսակ է, Անձնական կամ Սկզբնական, ու Ներգործական։

6. Սկզբնականը ո՞րն է։

— Ադամէն մեզի անցած մեղքն է, որ մեր վերայէն կընկնուի սուրբ Մկրտութեամբ։

7. Ներգործականը ո՞րն է։

— Այն մեղքն է՝ զոր կգործեմք խելուընիս հասնելով ու մեր ազատելով։

8. Ամեն ներգործական մեղք հաւասա՞ր են

— Ոչ, ոմանք թեթեւ են, և կկոչուին Նեբեկ Ղեպ։ Ոմանք ալ ծանր մեղքեր են։

9. Ծանր մեղքերը ի՞նչ կկոչուին։

— Մահու՞ ղեպ կամ մահացու՞ մեղք, որովհետեւ մեր հոգւոյն մահ կպատճառեն, ու զմեզ դժոխոց արժանի կընեն։

ԴԱՍ Թ.

ՄՈԼՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ

1. Գլխաւոր մոլութիւնք քանի՞ են։

— Եօթն են. 1) Հպարտութիւն. 2) Նախանձ. 3) Բարկութիւն. 4) Ծուլութիւն. 5) Ագահութիւն. 6) Որկրամոլութիւն. 7) Բղջախոհութիւն։

2. Այս մոլութեանց ինչո՞վ պէտք է յաղթել։

— Այս մոլութեանց դէմ յաղթել պարտիմք ներհակ եօթն առաքինութեամբք։

3. Որո՞նք են այն առաքինութիւնները։

— 1) Խոնարհութի՞ւն. 2) Եղբայրսիրութի՞ւն. 3) Հեզութի՞ւն. 4) Աշխատասիրութի՞ւն. 5) Ողորմասիրութի՞ւն. 6) Ժուժկալութի՞ւն. 7) Ողջախոհութի՞ւն։

4. Քրիստոնէական կամ բարոյական առաքինութիւնքն որո՞նք են։

— Չորս են. 1) Խոհեմութի՞ւն. 2) Արիութի՞ւն. 3) Արդարութիւն. 4) Բարեխառնութիւն։

5. Ուրիշ քրիստոնէական առաքինութիւնք չկա՞ն։

— Ամեն քրիստոնէական առաքինութիւնք այս չորսին մէջ կբովանդակուին։

6. Քրիստոնէական ամենէն մեծ առաքինութիւնը ո՞րն է.

— Սէր. զոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս պատուիրեց, և ուզեց որ Իւր աշակերտաց նշանն լինի։

7. Ի՞նչ է Քրիստոնէական սէրը.

— Սիրել զԱ՛ծ յամենայն սրտէ, և սիրել զընկերն իբրև զանձն, վասն Աստուծոյ։

8. Ո՞վ է մեր ընկերը.

— Մեր ընկերն, մեր եղբայրն են ամեն մարդիկ, նոյն իսկ մեր թշնամիները։

9. Ի՞նչ ըսել է Սէրեալ էքլ զանյն.

— Կնշանակէ Նախ, որ մեր ընկերոջը պիտի ուզեմք և պիտի ընեմք ինչ որ մեզի համար կուզեմք ու կընեմք։

10. Երկրորդ.

— Չպիտի ուզեմք և չպիտի ընեմք մեր ընկերոջ զայն զոր չեմք ուզեր որ մեզ ընեն։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՄԻՋՈՑՔ

ԴԱՍ Ա.

ՀՆՈՐՀՔ

1. Կրնամք մեք մեր ուժովը Աչ Օրէնքը պահել ու մեղքէ զգուշանալ.

— Ոչ. առանց Աստուծոյ շնորհացը չեմք կրնար ոչ Նորա Օրէնքը պահել, և ոչ մեղքէ զգուշանալ։

2. Աստուծոյ շնորհքն ի՞նչ է.

— Շնորհքն է Աչ այն գերբնական օգնութիւնը՝ զոր ձրիաբար, այսինքն պարզապէս իւր ողորմութեամբը՝ Աստուած մեզի կպարգևէ, արդեամբք Յիսուսի Քրիստոսի։

3. Ի՞նչ բանի համար կպարգևէ մեզ Աստուած իւր շնորհը.

— Մեղի օգնելոյ համար որ իւր Օրէնքը պահեմք, մեղքերէ զգուշանամք ու առաքինութիւն գործեմք, որով արժանանամք յաւիտենից փրկութեան։

4. Աստուած մեզի իւր շնորհները միշտ կուտայ.

— Այո՛, ամեն անգամ որ մեզի պէտք լինի, ու մեք ալ խնդրեմք զայն, և արժանի լինիմք մեր բարի վարուքը Աստուծոյ շնորհքն ընդունելոյ։

5. Ի՞նչ միջոցով կուտայ մեզ Աստուած իւր շնորհքը.

— Երկու միջոցով, որ են՝ Ս. Խորհուրդք Եկեղեցւոյ, և Բ. Աղօթք։

6. Ի՞նչ միջոցով կառաջացուցեմք մեր վերայ Աստուծոյ շնորհքը.

— Ճշիրութեամբ և բարի գործերով։

7. Ինչո՞վ կկորսնցնեմք մեք Այդ շնորհը.

— Մահացու մեղքերով։

ԴԱՍ Բ.

ԵՕԹՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵԿԵՂԵՑՒՈՅ

1. Ի՞նչ է Խորհուրդն Եկեղեցւոյ.

— Զգալի կամ արտաքին նշան ի Քեզ հաստատեալ մեր հոգւոյն մէջ շնորհք սրբելոյ և զմեզ սրբագործելոյ համար։

2. Զգալի կամ արտաքին նշանը ի՞նչ կը ներկայացունէ.

— Հոգւոյն Սրբոյ անտեսանելի շնորհքը։

3. Քանի՞ են Խորհուրդք Եկեղեցւոյ.

— Եօթն են. 1) Մկրտութիւն. 2) Դրոշմ. 3) Ապաշխարութիւն. 4) Հաղորդութիւն. 5) Խորհուրդ հիւանդաց. 6) Պսակ. 7) Կարգ։

4. Խորհուրդները ո՞յք կմատակարարեն.

— Եպիսկոպոսք, և ի տուչութենէ նոցա՝ քահանայք։ Սակայն Կարգի խորհուրդը՝ քահանայք չեն կրնար տալ, ու Եպիսկոպոսք միայն իշխանութի՛ւն ունին զայն մատակարարել։

5. Խորհուրդները կրնա՞ն կրկնուիլ.

— Մկրտութիւն, Դրոշմ ու Կարգը՝ չեն կրնար կրկնուիլ, իսկ միւս չորս Խորհուրդ-

ները կրնան կրկնուիլ։ Բայց Պասկը այն ատեն միայն կրնայ կրկնուիլ երբ ամուսնոց մին մեռանի։

6. Ինչո՞ւ Մկրտութիւն, Դրոշմ ու Կարգը ամենեին չեն կրնար կրկնուիլ։

— Վասնզի անջնջելի կնիք մի կտպաւորեն այն խորհուրդներն ընդունողին հոգւոյն վերայ։

ԴԱՍ Գ.

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՐՈՇՄ

1. Ի՞նչ է Մկրտութիւնը.

— Մկրտութիւնը խորհուրդ մի է որ մեր սկզբնական ու ներգործական մեղքերը կջնջէ, և զմեզ՝ վերստին ծննդեամբ՝ որդի Աստուծոյ կընէ, Քրիստոնեայ և անդամ սուրբ Եկեղեցւոյ։

2. Ինչո՞վ կմկրտուի երախայն.

— Բնական ջրով յԱւազան Եկեղեցւոյ, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

3. Մկրտուողն ի՞նչ խօսք կուտայ.

— Մկրտուողը՝ իւր կնքահօր բերանով երկու բան կխոստանայ. 1) Հրաժարիլ սատանայէ և յամենայն խաբէութեանց նորա. այսինքն ի մեղաց. 2) Հաւատալ ի Քն, և պահել զվարդապետութիւն նորա և գործէնս։

4. Ի՞նչ է Դրոշմը.

— Դրոշմն է խորհուրդ մի որ մկրտուած Քրիստոնէին կպարգևէ զնորհս Ս. Հոգւոյն։

5. Երբ կարուի Դրոշմը.

— Մկրտութենէ անմիջապէս ետքը։

6. Ի՞նչպէս կարուի Դրոշմը.

— Սրբալոյս մեռոնաւ կնքելով, (այսինքն խաչաձև օծելով) զդդայարանս, և ձեռն դնելով նորա գլխոյն վերայ և աղօթելով։

7. Ի՞նչ օգուտ ունի Դրոշմը.

— Դրոշմը զմկրտեալն կհաստատէ Քրիստոնէական հաւատքին մէջ, և նորա հոգին կզօրացունէ Հոգւով Սրբով։

ԴԱՍ Դ.

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

1. Ի՞նչ է ապաշխարութիւնը.

— Ապաշխարութիւնը Խորհուրդ մի է զոր Քրիստոս հաստատեց, որպէսզի միրատութենէ եաքը դարձած մեղքերնուս թողութիւն ստանամք։

2. Ապաշխարութեան Խորհուրդը ի՞նչ կընդունիմք։

— Երբ մեր մեղաց վերայ կատարեալ զղջմամբ ապաշխարելով խոստովանիմք առաջի Աստուծոյ, ու քահանայէն ընդունիմք զԱրձակումն։

3. Արձակումն ի՞նչ է.

— Արձակումը վճիռ մի է զոր խոստովանահայր քահանայն կարատանէ յանուն Աստուծոյ։

4. Ո՞վ տուած է քահանային արձակելոյ իշխանութիւնը.

— Քրիստոս տուաւ այդ իշխանութիւնը յանուն իւր թողութիւն տալոյ մեղաց զղջացեալ ապաշխարողին։

5. Ի՞նչպէս պէտք է պատրաստուիլ ի խոստովանութիւն.

— Խոստովանութեան պատրաստուելոյ համար պարտիմք 1) Մեր խիղճը քննել թէ ի՞նչ բանի դէմ մեղանչեր եմք. 2) Զղջալ մեր մեղացը վերայ. 3) Հաստատուն առաջադրութիւն, այսինքն որոշումն դնել որ մէյ մ՚ալ մեղք չգործեմք։

ԴԱՍ Ե.

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

1. Ի՞նչպէս պարտիմք խոստովանիլ.

— Պէտք է խոստովանահօր առաջը երթամք յեկեղեցին, ու ծունր դնելով ըսել. «Մեղա՛ մեղանասարբ Եբարդարեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Մեղա՛ յե՛ն Աստուծոյ։ Խոստովանիմ առաջի Աստուծոյ և Սրբուհւոյ Աստուածածնին և առաջի ամենայն Սրբոյ, և առաջի քո, հայր սուրբ, զանազան մեղս զոր գործեալ եմ։ Քանզի մեղա՛ խորհրդով, բանիւ և գործով. կամայ և ակամայ, գի-

պոմբեամբ և անբիծությամբ. մեղայ Աստուծոյ»։

2. Մեղայեն յետոյ ինչ պարտիմը ըսել.

— Պարտիմը մեր մեղքերը խոստովանիլ մէկիկ մէկիկ, ու ամենեին մեղք մի չպահել։

3. Եթէ մեղք մի պահեմք ու չխոստովանիմք՝ կմեղանչեմք.

— Այո, մեծ մեղք կգործեմք, ու առաջ արձակումիս օգուտ չունենար մեզի։

4. Ինչու.

— Վասնզի մեղք մի ամաչելով ծածկել ու չխոստովանիլը՝ ոչ եթէ գքահանայն խաբել ուզել է, այլ զԱստուած, որ ամեն մեր գաղտնիքը գիտէ և կտեսանէ։

5. Մեղքերնիս խոստովանելէն ետքը ի՞նչ պէտք է ընեմք.

— Քահանային մեզի պարտք դրած ապաշխարանքը իսկոյն ու կատարեալ կերպով կատարել, ու ամեն ջանք դնել որ նորէն չմեղանչեմք ու Աստուծոյ շնորհքէն չզրկուիմք։

6. Ապաշխարանքնիս կատարելէն յետոյ ի՞նչ պարտիմք ընել.

— Պարտիմք արձակումն խնդրել՝ ասելով. «Հայր սուրբ, ցեղ ունիմ մեղանչեցուցեալ և

բարեխօս առ Միածին Որդին Աստուծոյ, զի էլեանամբեամբք որ պատեալ է մեզ, արձակեսցես զմեզ ի էապէս մեղաց իմոց. աղաչեմ զքեզ»։

ԴԱՍ Զ.

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

1. Ի՞նչ է Հաղորդութիւնը.

— Հաղորդութիւնը Խորհուրդ մի է որ

ընդ տեսակաւք հացի և գինւոյ՝ կպարունակէ զճշմարիտ Մարմին և Արիւն եւ զԱստուածութիւն Յիսուսի Քրիստոսի։

2. Երբ հաստատեց Քրիստոս զՍուրբ Խորհուրդն Հաղորդութեան.

— Աւագ Հինգշաբթի օրը, որ է շարշարուելուն ու խաչուելուն նախընթաց օրը։

3. Հաղորդութեան Խորհուրդը ո՞ւր կը կատարուի.

— Եկեղեցւոյ մէջ, Ս. Պատարագի ապարողութեամբ։ — Պատարագը Քրիստոսի խաչին

վերայ մատուցած զոհն է առ Աստ, ի քաւութիւն մեղաց կենդանեաց և նոնջեցելոց։

4. Պատարագին մէջ երբ հացն ու գինին կփոխարկին ի մարմին և յարիւն Քրիստոսի։

— Երբ պատարագիչ քահանայն Առեք+ կերեք+-էն յետոյ Հոգւոյն Սրբոյ կոչումը կընէ։

իսկոյն օրհնած հացը՝ կփոխարկի ի Մարմին Քրիստոսի, և գինին՝ յԱրիւն Նորա։

5. Ուրեմն Պատարագին սոյն աղօթքներուն ատեն եկեղեցիէն դուրս ելնողը Պատարագին ներկայ գտնուած կլինի՞.

— Ոչ. նա Ս. Խորհրդոյն կատարման ատեն հեռանալովը՝ Պատարագին ներկայ գտնուած չլինիր, այլ պէտք է որ կենայ մինչև որ ընդունի այն վերջին օրհնութիւնը զոր ժամարար քահանայն կուտայ յանուն Աստուծոյ։

6. Քրիստոսի բուն Մարմի՞նը և բուն Արիւնն է որ կբաշխուի մեզ Ս. Հաղորդութեամբ։

— Ա.յո, Հաղորդութիւն առած ժամանակնիս՝ Քրիստոսի բուն իսկ ճշմարիտ Մարմին և Արիւնն է որ կընդունիմք, Աստուածութեամբն Քրիստոսի։

7. Ինչո՞ւ ուզեց Քրիստոս որ հացին ու գինւոյն տեսակօք մեզ ներկայանայ.

— Որպէսզի մեզ իմացունէ թէ ինքը մեր հոգւոր սնունդն է, եթէ արժանաւորութեամբ իւր հետն հաղորդուիմք։

ԴԱՍ Է.

ԱՐԺԱՆԱՒՈՐ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ

—

1. Արժանաւորութեամբ հաղորդուելոյ համար ի՞նչ պէտք է գործել։

— Պէտք է մարմնաւոր և հոգեւոր պատրաստութեամբ, ու տեսիլ և դողութեամբ Քրիստոսի մերձենալ։

2. Ո՞րն է մարմնաւոր պատրաստութիւն։

— Մարմնով, պարկեշտութեամբ, առանց զարդարանքի, ու ծոմ բերանով տեսաւոր Խորհրդոյն մերձենալ։

3. Ո՞րն է հոգեւոր պատրաստութիւնը։

— Պէտք է նախ և առաջ խոստովանած ու արձակումն առած լինիմք, մեր թշնամեացը հետ հաշտուած լինիմք, որոց որ սիրտը կոտրած է՝ անոնցմէ ներումն խնդրած լինիմք, ու խղճերնուս վերայ ամենեին ծանրութիւն մի չունենամք։

4. Ուրիշ ի՞նչ պէտք է։

— Պէտք է սրտերնուս մէջ եռանդուն սէր ունենամք մեր Փրկչին վերայ, ու պէտք է կատարեալ ու հաստատուն հաւատք ունենամք թէ ճաշակ առած ատենիս՝ բուն իսկ զՔրիստոս կընդունիմք մեր հոգւոյն մէջ։

5. Ս. Հաղորդուիը՝ արժանաւորութեամբ ընդունողներուն ի՞նչ շնորհք կպարգեւէ.

— Արժանաւորութեամբ մերձեցողները կմիացուցանէ Քրիստոսի հետ. կաճեցուցանէ նոցա մէջ աստուածային շնորհքը, կակարացուցանէ կրքերը, ու կերջանկացուցանէ նոցա հոգին։

6. Եթէ առանց հոգեւոր և մարմնաւոր պատրաստութեան մերձենամք ի Ս. Խորհուրդն, կընդունիմք զնորս Քրիստոսի.

— Ո՛չ. այլ ընդհակառակն մեր դատապարտութիւնը կընդունիմք, եթէ անարժանութեամբ մերձենամք ի Ս. Խորհուրդն։

7. Ի՞նչպէս մեր դատապարտութիւնը կընդունիմք.

— Երբ անարժանութեամբ ճաշակեմք զմարմին և զարիւն Քրիստոսի, Յուդային պէս համբուրելով զնա կմատնեմք, Հրէից պէս զնա ի խաչ կհանեմք, որով նոցա պէս

կդատապարտուիմք ի տանջանս դժոխոց։

8. Ո՞ր ժամանակ պէտք է հաղորդուիմք.

— Քրիստոնեայն որչափ ստէպ հաղորդ-

ուի, այնքան առաւել շնորհօք կլցուի։ Բայց գոնէ պարտիմք հաղորդուիլ տարին հինգ անգամ, Տաղաւար օրերուն, Նոյնպէս Ծանր վտանգի մէջ, ճանապարհորդութենէ

առաջ, և հիւանդութեան ժամանակ։

9. Տարին գոնէ մէկ անգամ չհաղորդուողը՝ Քրիստոնեայ կրնայ կոչուիլ.

— Ոչ. այնպիսի ծոյլ ու թերահաւատ հաւատացեալը՝ որ գէթ տարին մի անգամ, (Ս. Զատկին) չհաղորդուիր իւր Փրկչին հետ, նա ճշմարիտ Քրիստոնեայ չէ։

ԴԱՍ Ը.

ԽՈՐՀՈՒՐԴՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ. — ՊՍԱԿ. — ԿԱՐԳ.

1. Ի՞նչ է Խորհուրդն հիւանդայ.

— Այն Խորհուրդն է որ կշնորհէ հիւանդայ հոգևոր և մարմնաւոր թեթևացումն։

2. Ի՞նչ հոգևոր և մարմնաւոր թեթևացում կշնորհէ այս Խորհուրդը.

— Հիւանդին հոգւոյն զօրութիւն կուտայ ընդդէմ երկիւղի մահուան, և թողութեամբ ներելի մեղաց՝ կպատրաստէ մեռնելու սրբութեամբ։ Նաև մարմնոյն ցաւոց ալ թեթեւութիւն կուտայ, եթէ ԱՅ հար-

կաւոր տեսնէ ի փրկութիւն հոգւոց մերոց։

3. Ի՞նչպէս կկատարուի այս Խորհուրդը.

— Քահանայն ձեռք կդնէ հիւանդին վերայ, ու սահմանուած աղօթքները կկարդայ հաւատով։

4. Ի՞նչ է Պատակը.

— Պատակն է Խորհուրդ որ կնուիրագործէ զամուսնութիւն առն և կնոջ, տալով նոցա շնորհք որ մէկտեղ անբաժան կերպով մինչև ի մահ ապրին քրիստոնէաբար, վասն որդէծնութեան։

5. Ի՞նչ է Կարգը.

— Կարգն է Խորհուրդ որ ձեռնադրուողին իշխանութիւն կուտայ եկեղեցական պաշտամունքը կատարել, պարգևելով միանգամայն շնորհք որ արքութեամբ կատարէ զայնս։

6. Եկեղեցական պաշտամունքն ի՞նչ են.

— Սուրբ Խորհուրդները մատակարարել, ժողովուրդն հովուել կամ կառավարել, և Աստուծոյ խօսքը քարոզել։

7. Ո՞վ հաստատեց Կարգը.

— Քրիստոս Տէրն մեր կամեցաւ որ իւր

Եկեղեցին ունենայ միշտ հովիւներ. ուստի Առաքելոց հետևոտ յաջորդներնուն տուաւ զիշխանութիւն այս խորհուրդը կատարելոյ։

8. Ո՞վ են յաջորդք Առաքելոց.

— Առաքելոց յաջորդ են Եպիսկոպոսները, և նոքա միայն ունին իշխանութիւն ձեռնադրել քահանայ, սարկաւագ, և տալ դպրութեան փոքր աստիճանները։

ԴԱՍ Թ.

ԱՂՕԹՔ

1. Ի՞նչ է Աղօթքը.

— Աղօթքն է մեր միտքն ու սիրտն առ Աստ բարձրացունել, իրեն փառք տալու և մեզի համար խնդիրներ ընելու համար։

2. Պարտականն եմք աղօթել.

— Այո՛, Աստուած դրած է մարդոց վերայ այս պարտքը, և Քրիստոս իսկ միշտ

կաղօթէր իբրև մարդ, և չարչարանաց պատրաստուեցաւ աղօթքով, գոչելով առ Հայր, « Եղիցին կամք քո » ։

3. Ե՞րբ պարտիմք աղօթել.

— Միշտ պարտիմք աղօթել, բայց մասնաւորապէս՝ փորձութեան մէջ, ու վտանգի և հիւանդութեան ժամանակ ։

4. Մեր աղօթելոյ սովորական ժամանակը որն է.

— Առաւօտուն երբ արթննամք, ճաշէն առաջ և ետքը, ու գիշերը՝ պառկելէ առաջ, պարտիմք ինքզինքնիս Աստուծոյ յանձնել։

5. Եկեղեցին ե՞րբ պարտիմք աղօթել.

— Թէև ամեն օր Եկեղեցին մտնել ու աղօթք ընելը հարկաւոր է, բայց և առաւել պարտիմք Կիրակի և Տօն օրերը անպատճառ Եկեղեցի երթալ և աղօթել։

6. Ի՞նչպէս պարտիմք աղօթել.

— Պարտիմք աղօթել ուշադրութեամբ, խոնարհութեամբ, վստահութեամբ, յարատևութեամբ և զղջմամբ ։

7. Ի՞նչ պարտիմք աղօթել.

— Պարտիմք խնդրել յԱստուծոյ այն բաները որ օգտակար են ի փրկութիւն մեր և ընկերայ։

8. Կրնամք Աստուծմէ խնդրել առողջութիւն, իմաստութիւն, հարստութիւն.

— Այո՛, կրնամք խնդրել, բայց պարտիմք Աստուծոյ սուրբ կամացը թողուլ որ անօրինէ զօգուտն մեր ինչպէս որ ուզէ։

9. Ինչո՞ւ Աստուծոյ կամացը պիտի թողուամք.

— Վասնզի մեք մեր ճշմարիտ օգուտը չեմք կրնար ճանաչել. ուստի պէտք է Աստուծոյ թողութիւնք որ ինչպէս կամի այնպէս ընէ, ինչ որ մեզի օգուտ կաւուանէ։

10. Աստուած կլսէ՞ ու կկատարէ՞ միշտ մեր աղօթքը.

— Այո՛, Աստուած կլսէ մեր աղօթքը. Նա անտարակոյս կկատարէ մեր աղաչանքը, եթէ հաւատքով խնդրեմք, ու Իւր պաշտելի կամքին համեմատ խնդրեմք։

ԴԱՍ Ժ.

ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

1. Ամենէն գերազանց ու աստուածահաճոյ աղօթքը ո՞րն է.

— Այն աղօթքն է զոր Տէրն մեր սովրեցուց, ուստի և Տէրունական կկոչուի։

2. Ո՞րն է Տէրունական աղօթքը.

— «Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո, եղիցի կամք քո, որպէս յերկինս՝ և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր։ Թող մեզ զպարտս մեր, որպէս և մեք թողուցուք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ ազատեա՛ զմեզ ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն»։

3. Ինչո՞ւ «Հայր մեր» կկոչեմք զԱստուած.

— Վասնզի Նա է մեր ամենուս ճշմարիտ Հայրն և խնամք տանողը, ու ամենքս ալ հաւասարապէս Նորա զաւակներն եմք։

4. Եթէ Աստուած մեր ամենուս Հայրն է, մեք իրարու ինչ կլինիմք.

— Ամենքս իրարու եղբայր եմք, ուստի ամենքս ալ պէտք է զիրար սիրեմք, որպէսզի Աստուած ալ զմեզ սիրէ։

5. Ինչո՞ւ կըսեմք «Ոչ յերկինս է»։

— Վասնզի թէև Աստուած ամեն տեղ է, բայց առաւելապէս՝ Իւր երկնային փառաց մէջ։

6. «Սրբեսցէ զարտասուս նոցա» ըսելով ի՞նչ կխնդրեմք։

— Կխնդրեմք որ զԱստուած այնպէս սիրեն ամեն մարդիկ՝ որ Նորա Անունը որդիական սիրով և արժանաւորութեամբ բերան առնուն, և ոչ եթէ պարապ տեղ, երդումով ու ստութեամբ։

7. «Եկեսցէ արքայութիւն քո» ըսելով ի՞նչ կխնդրեմք։

— Կխնդրեմք որ Աստուծոյ ճշմարտութեան թագաւորութիւնը տիրէ բոլոր մարդոց վերայ։

8. Ի՞նչ է ըսելն «Եղիցի կամք քո որպէս յերկինս և յերկրի»։

— Որպէսզի յիշեմք միշտ որ պէտք չէ մեր կամքը, մեր հաճոյքը փնտռենք, այլ ամեն բանի մէջ կատարենք Անոյ կամքը։

9. Ի՞նչ է ըսելն «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»։

— Աստուած կխոստովանիմք որ մեր ամեն օրուան կերակուրը Աստուած է որ կշնորհէ օրհնելով մեր աշխատութիւնը։

10. Ինչո՞ւ կըսեմք «Թող մեզ զպարտս մեր»։

— Վասնզի ամեն օր Աստուծոյ սիրոյն և կամքին դէմ գործելուինս, պէտք ունիմք ամեն օր աղաչելու որ մեր յանցանքները ներէ Նա հայրաբար։

11. Ինչո՞ւ կյարեմք «Որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։

— Վասնզի գիտնալու եմք որ ինչուան որ մեզ վշտացընողներուն սրտանց չներեմք, Աստուած ալ մեզի չներեր։

12 Ի՞նչ կխնդրեմք ըսելով «Մի տանիր զմեզ ի փորձութիւն»։

— Կուզեմք ըսել թէ մի թողուր որ փորձութեան մէջ ինկամք։ Այս խօսքով կխոստովանիմք որ երբ Աստ մեզ չօգնէ՝ կը յաղթուիմք ի փորձութենէ ու կմեղանչեմք։

13. Ինչո՞ւ կաղօթեմք «Փրկեա զմեզ ի չարէ»։

— Վասնզի մեք զմեզ չեմք կրնար աղա-

տել ի չարէ, այլ կարող է Աստուած միայն, որուն պարտիմք միշտ դիմել։

14. Ինչու կըսեմք «Զէ՛ ո՛ւ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն»։

— Վասնզի Այ թագաւորութիւնը, զօրութիւնը ու փառքը ոչ սկիզբ ունին և ոչ վերջ։

15. Քանի՞ բան կխնդրեմք Հայր մերին մէջ.

— Գլխաւորապէս չորս բան.

Ա. Մեր ամեն օրուան հացը, կերակուրը.

Բ. Մեր մեղքերուն թողութիւնը.

Գ. Փորձութեանց յաղթելու շնորհքը.

Դ. Չարէն ազատութիւնը, մասնաւորապէս մեղքէն ու յաւիտենական դատապարտութենէն։ Ցորմէ ազատեսցէ զմեզ Աստ շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յեսի Քրիստի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԱՂՕԹՔ

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ

ՀԱԻԱՏԱՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ

Զոր արարեալ է որբոյ Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ Քեզ, Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց եւ ինձ բաղմամեղիս։

Հաւատով խոստովանիմ, եւ երկիր պագանեմ Քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի. հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ զանգիտութեան. եւ լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել Քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի Քէն զխնդրուածս իմ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բաղմամեղիս։

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս եւ առաջի Քո. ընկալ

զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք.
եւ ողորմեա քո արարածոց.

Որդի Աստ. Ամ ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ՝ եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար թաղեցար եւ յարեար ի մեռելոց, եւ համբարձար փառօք առ Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն՝ յորժամ գաս արքայութեամբ քով. եւ ողորմեա.

Հոգի Աստ Ամ ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի Վերնատունն, եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւազանին, մեղայ յերկինս եւ առաջի քո. մաքրեա զիս վերստին աստուածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. եւ ողորմեա.

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ. եւ ողորմեա քո արարածոց.

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով բանիւ եւ գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, եւ գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց. եւ ողորմեա քո արար.

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ

սուրբ Աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուծեանդ քո զգայարանօք իմովք եւ ամենայն անդամօք մարմնոյս. եւ ողորմ.

Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս հայել յարատ, եւ ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղ.

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում.
եւ ողորմեա քո արար.

Իմաստութիւն հօր Յիսուս, տուր ինձ իմաստութի զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ ի չար խորհրդոց ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա.

Կամեցող բարեաց տէր կամարար, մի թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղ.

Սրբոյ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. եւ զորացո զսիրտ իմ ատել զմեղս, եւ սիրել զՔեզ միայն, եւ առնել զկամս քո. եւ ողորմեա.

Խնամող արարածոց, պահեա նշանաւ խաչի քո զհոգի եւ զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց, եւ ի մարդոց անիրաւաց, եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողորմեա քո արար.

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուսէ եւ ի գիշերի, ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել զի մի երբէք սատանեցայց. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ.

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, Քեզ յանձն առնեմ զանձն իմ. Դու հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եւ ողորմեա.

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սողորութեանց իմոց ի բարի սովորութիւն. եւ բեւեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ դեհենին եւ զսէր արքայութեանն, զի զոչնացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա քո արարածոց.

Աղբիւր անմահութեան, աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս

պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան գելանելն իմ յաշխարհէս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմ.

Պարգեւիչ ողորմութեան, պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով, եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. եւ ողորմեա.

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն առացես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն որք են ի ներքոյ երկնից. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմ.

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, եւ հանգչիլ յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչեւ յօր մեծի գալստեան քո. եւ ողորմեա.

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք հօր դատել զկենդանիս եւ զմեռեալս, մի մոռանար ի դատաստան ընդ ծառայի քում այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն, եւ լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց երկնից արքայութիւնդ. եւ ողորմեա.

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի Քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն

որ առ իս յանցանաց. եւ դարձս զնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ քում արժանի եղիցին. եւ ողորմեա.

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայի քո, եւ կատարեա ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածնին եւ Յովհաննու Մկրտչին եւ սրբոյն Ստեփանոսի նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, եւ սրբոց Առաքելոց, Մարգարէից, Վարդապետաց, Մարտիրոսաց, Հայրապետաց, Ճգնաւորաց, Կուսանաց եւ ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց։ Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի սուրբ երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ՄԱՂԹԱՆՔ ԶՕՐԱՒՈՐՔ

ԱՐՀԱՒՐԱՑ ԳԻՇԵՐԱՑՆՈՑ

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ

ԲԱՆ. ԺԲ. —Գ.

Ընկալ քաղցրութեամբ, տէր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս, մատիր գթութեամբ առ պատկառեալս դիմաք. փարատեա, ամենապարգեւ, զամօթական տխրութիւնս. բարձ յինէն, ողորմած, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա, հնարաւոր, զմահացու կրթութիւնս. աւարեա, միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս. բացադրեա, վերնային, զմոլելոյն մառախուղ. կնքեա, կեցուքիչ, զկորուսչին ընթացմունս. ցրուեա, ծածկատես, զրմբռնողին չարգտմունս. խորտակեա, անքնին, զմարտողին դիմեցմունս։ Տեառնագրեա քո անուամբդ զլոյսանցոյց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո զքո նշանդ ի հետս ելից մաղթողիս. ամրացո քո աջովդ զհանգստեանս խաչի. մաքրեսցես ի հաղրից զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամաքդ զտառապեալ անձն ոգւոյս. անխաբդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջա-

պակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես ի դիմի ընդդէմ դիւացն դասու։ Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ Աստուածածնիդ եւ ամենայն ընտրելոց։

Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից անզարհուրելի զետեղմամբ ի ծփական խռովութենանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազց, խոլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ։ Եւ սթափեալ վերստին ի ննջմանէ ծանրութեան ամենազգաստ արթնութեամբ, հոգեւորդ զուարթութեամբ ի քեզ արձանացեալ զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ, ամենօրհնեալ թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՂՕԹՔ ԶՕՐԱԴՈՐ

Նորին սրբոյն Գրիգորի

ԲԱՆ. ԽԱ.

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ ամենայնի, Հօրդ ահաւորի անքնին ծնունդ, որ տկարանայ առ ի քէն եւ ոչ ինչ. որ ի ծագել անբաստուեր նշուլից ողորմութեան քո փառաց, հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, եւ թագաւորէ ձեռն քո ամենակար քաւիչդ ամենայնի։ Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկնի անճառ, եւ յերկրի անզնին, ի տարր գոյի, եւ յիզրս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ ի բարձունս. եւ քեզ ընդ Հօր եւ Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. Ամէն։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՆԿ
ՆԱԽՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԻՍ

Յառաջաբան . . . . . Է.
Նամակ Ս. Պատրիարքին . . . . . ԺԱ.
Տեղեկագիր Քննիչ Յանձնախմբին . . ԺԲ.

ՄԱՍ Ա.

ՀԱԻԱՏԱԼԻՔ

ԴԱՍ Ա. Վախճան Քրիստոնէին 15
ԴԱՍ Բ. Նշան Քրիստոնէին. 16
ԴԱՍ Գ. Ուսանելիք Քրիստոնէին 18
ԴԱՍ Դ. Հանգանակ Հաւատոյ 20
ԴԱՍ Ե. Աստուած 25
ԴԱՍ Զ. Երրորդութիւն 26
ԴԱՍ Է. Արարչագործութիւն 27
ԴԱՍ Ը. Հրեշտակք 29
ԴԱՍ Թ. Մարդիկ 31
ԴԱՍ Ժ. Փրկիչն 33
ԴԱՍ ԺԱ. Յիսուս Քրիստոս 35
ԴԱՍ ԺԲ. Խորհուրդ Մարդեղութեան . . . 37
ԴԱՍ ԺԳ. Խորհուրդ Փրկագործութեան . . . 39
ԴԱՍ ԺԴ. Եկեղեցի. 43
ԴԱՍ ԺԵ. Սուրբ Գիրք եւ Աւանդութիւն . . 45
ԴԱՍ ԺԶ. Հանդերձեալ կեանք. 46

ՄԱՍՆ Բ.

ՊԱՐՏԻՔ

ԳԱՍ Ա. Օրէնք Քրիստոնէին 51
ԳԱՍ Բ. Տաճնաբանեայ պատուիրանք . . . 52
ԳԱՍ Գ. Առաջին պատուիրան 55
ԳԱՍ Դ. Երկրորդ եւ Երրորդ պատուիրան . 56
ԳԱՍ Ե. Չորրորդ պատուիրան 58
ԳԱՍ Զ. Հինգերորդ պատուիրան 60
ԳԱՍ Է. Զ. Է. Ը. Թ. եւ Ժ. պատուիրանք . . 63
ԳԱՍ Ը. Նոր օրէնք. — Մեղք 65
ԳԱՍ Թ. Մոլութիւնք եւ Առաքինութիւնք . 67

ՄԱՍՆ Գ.

ՄԻՋՈՑՔ

ԳԱՍ Ա. Շնորհք 71
ԳԱՍ Բ. Եօթն Խորհուրդք Եկեղեցւոյ . . . 73
ԳԱՍ Գ. Մկրտութիւն եւ Դրոշմ 74
ԳԱՍ Դ. Ապաշխարութիւն 76
ԳԱՍ Ե. Խոստովանութիւն 77
ԳԱՍ Զ. Հաղորդութիւն 79
ԳԱՍ Է. Արժանաւոր եւ անարժ. հաղորդումն 82
ԳԱՍ Ը. Խորհուրդն հիւանդաց. Պսակ. Կարգ . 85
ԳԱՍ Թ. Աղօթք 87
ԳԱՍ Ժ. Աղօթք Տէրունական 90

374

374

2013

<< Ազգային գրադարան

NL0225287